Զ. ՏԱՐԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903 Թիւ 550

ԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Փանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ, վերջին երեսի համար 20 սանթիմ։ Երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վաճառքի համար ձևոք 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեանս հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձևոք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձևոք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուի

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՓՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՕԳՆԵՆՔ ՍԱԿԵ— ԴՈՆԱՑԻՆԵՐԻՆ

Անշուշտ Բուլգարիայում ապրող ոչ մի հայ չէ մոռացել այն սիրալիր ընդունելութիւնը, որ Սուլթանի սրից փախած գաղթական հայերը ունեցան Բուլգարիայում։

Թէ բուլգար իշխանութիւնը և թէ ժողովրդի բոլոր խաւերը բացարձակապէս իբրեւ եղբայրներ վարվեցին գաղթական հայերի հետ։ Բուլգարիա գաղթող հայը Բուլգարիայում իրեն գրեթէ օտար չըզգած. նրան մեծ դիւրութիւն տրվեց իր կրած սարսափները և տանջանքները եթէ ոչ մոռանալու, գոնէ թեթեւ զգալու համար։

Այսօր նոյն վիճակի մէջ են գտնվում Մակեդոնացիները և Ադրիանուպոլսի նահանգի բուլգարները:

Ադրիանուպոլսի նահանգից նոյն գաղան Կարմիր Սուլթանի սրից ու հրացանից ճողոպրելով մի քանի հազար բուլգար գաղթականներ, մեծ մասամբ կիներ, աղջիկներ և երեխաներ ապաստանել են Բուլգարիա։ Բուլգար ժողովուրդը եւ կառավարութիւնը ամեն կերպ աշխատում են այդ հալածական հիւրերին օգտակար հանդիսանալ։ Մենք, հայերս էլ անկարող են անտարբեր մնալ այդ թշուառ, հալածական հայրենազուրկների հանդէպ և պարտաւոր ենք մեր ձեռքից եկած օգնութիւնը հասցնել։

Վարնայում այս րոպէիս գտնվում են 500ի չափ բուլգար փախստականներ. այս խեղճերն էլ տեղաւորված են նոյն հիւանդանոցի շէնքի մէջ, որում սրանից մի քանի տարի առաջ տեղաւորվեցին հայ գաղթականները։ Բուլգար գաղթականներն էլ նոյն շէնքի մէջ, նոյն ցաւերով են տանջվում, նոյն մեծ կորուստներն են ողբում, ինչ որ ողբացին մեր գաղթականները. ի հարկէ անկարելի էր որ հայ երիտասարդութիւնը անտարբեր մնար այնպիսի վշտի դէմ, որի նրմանը ինքը մի քանի տարի առաջ նոյն ձեւով կրել էր. և նա չատապեց իր պարտականութիւնը գոնէ մասամբ կատարել դէպի իր թշուառ եղբայր բուլգարները։

Վարնայի երիտասարդներից մի քանի հոգի մտածեցին դիմել Պ. Բաբայեանին որ արտակարգ գներով մի ներկայացում տրվի ի նպաստ Թուրքիայից ճողոպրող բուլգար գաղթականների։

Պ. Բաբայեան սիրով համաձայնեց ձրիաբար ներկայացումը տալ։

Ցոմսակները պէտք է վաճառէ հայերից կազմված մի մասնախումբ։

Հայ հասարակութեան այս տեղեկութիւնները տալուց յետոյ մենք, համոզված լինելով նրա մարդասիրական զգացմունքների մէջ. գիմում ենք անում Վարնայաբնակ հայերին, մանաւանդ բարեկեցիկ եւ հարուստ հայերին, որ ոչ մի տոմսակ չը մերժեն, ցոյց տան մեր բուլգար եղբայրներին, որ մենք էլ գիտենք թշուառութեան հանդէպ կարեկից հանդիսանալ և պարտաճանաչ լինել։

Ինչպէս ասացինք տոմսակների գիները արտակարգ պէտք է լինեն, ամենաբարձրը մինչեւ 20 ֆրանք։ Ցրովհետեւ այս ներկայացումը աւելի հանգանակութեան կերպարանք պէտք է ունենայ, քան թէ ներկայացումի։

Ամբողջ գաղթականութեան թիւը մի քանի հազարի է հասնում, և եթէ այսպէս շարունակվի գուցէ աւելի եւս շատանայ։ Շատ լաւ կը լինէր, եթէ բոլոր քաղաքների հայերն էլ իրենց յարմար դատած կերպով այդ խեղճ հալածականներին օգնութեան հասնէին. օրինակ հանգանակութիւններով, կամ ներկայացումներով։

Վարնայի ներկայացումից կայացած դրամը պէտք է յանձնվի քաղաքապետութեան, գաղթականներին յանձնելու համար։ Մեծ քանակութեամբ գաղթականներ գտնվում են Բուրգասում, ուրեմն ուրիշ տեղերից կարող են և այնտեղ ուղարկել։

ՎԱՐԴՕ

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Պուլկարիոյ ամբողջ հայութեան համար այս րոպէիս ամէնէն հետաքրքրաշարժ դէմքն է ապահովապէս Ներսէս եպիսկոպոս Ասլանեանը. հաւանական առաջնորդը Պուլկարիոյ հայոց։ Երբ ամէն կողմէ, մամուլ և հանրային կարծիք, բաղձանքի միահամուռ արտայայտութեամբ մը իրենց ձայները միացնել կը թուին այս ամբասիր եկեղեցականին վրայ, անօգուտ չէ՝ և նոյն իսկ հարկաւոր է իմեր հանել անոր կեանքին դրուագները, անոր ազգային օրինակելի գործունէութեան պարագաները, որոնց ամբողջութիւնը կը կազմէ ամէնէն մաքուր, ամէնէն անստգիւտ կենսագրականներէն մէկը, որուն արժանանալ ուզէր հայ Եկեղեցւոյ պաշտօնեայ մը։

Ներսէս հպիսկոպոս Ասլանեան իր խստակրօն վարքովը, ազգայնական աւանդապահութեամբը, եկեղեցական կարգերու և օրէնքներու հանդէպ իր ջերմ նախանձախնդրութեամբը հիներուն, իսկ ըմբռնումներուն ու գաղափարներուն ուղղութեամբ նորերուն կը վերաբերի։ Գործակիցը Ներսէս պատրիարքի, Իզմիրեանի, Օսեանի ու Սէրվիչէնի, անոնց զգացումներուն ու տեսութիւններուն հաղորդակից. անոնց դձած շառաւիղէն ընթացած է միշտ, ու արտասովոր սիրով մը կը սիրէ իր ազգն ու իր եկեղեցին։

Ծնած է Սամաթիա 60 տարի առաջ և նախնական կրթութիւնը տեղւոյն ազգ. վարժարանին մէջ առնելէ յետոյ, աշակերտած ու ընթացաւարտ եղած է Մայր վարժարանէն 1860 թուականին։ Ապա Ամասիա գացած է իր հոգևոր ծնողին Սամաթիացի Գէորգ եպս. Անդրանիկեանի քով։ Երեք տարի ետքը Մարսուանի վանքին մէջ սարկաւագ ձեռնադրուած և 1862ին Պոլիս երթալով Կրօնական ժողովին առջև քննութիւն տուած ու վկայական ստացած է վարդապետանալու. նոյն տարին Ամասիա վերադառնալով վարդապետ ձեռնադրուած է։

Գէորգ եպս. իր հոգևոր ծնողին վախճանումէն յետոյ 1867 ին դարձեալ Պոլիս եկած ու վեց տարի վարած է Թաղին քարոզչութիւնը, որոյ միջոցին չինուած է տեղւոյն հրկիզեալ երկսեռ վարժարանը, Ասլանեանի անձնական ջանքովը ու աշխատութեամբը.

1873ին Ներսէս պատրիարք, գնահատելով վարդապետին գործունէութիւնը, Բերայի քարոզչութեան կոչած է զանիկա, պաշտօն զոր վարած է տասը տարի շարունակ, մինչոյն ատեն անդամակցելով, ազգ. երեսփոխանական ժողովին, կրօնական ժողովին, Վանօրէից խորհրդին և մասնախումբերու։ Գործունեայ վարդապետը, հեռի նմանելէ մեր այն շարք մը կրօնականներուն, որոնք տկուելու պարարտանալու միայն կը նուիրեն իրենց մտքն ու ժամանակը, ինքնօգնութեամբ կը զարգացնէր իր միտքը ու մասնաւորապէս անգլիերէն լեզուն կուսանէր։

1883 թուականին Եւդոկիոյ առաջնորդութեան պաշտօնին կոչուեցաւ, սակայն երկու տարի յետոյ հիւանդանալով Պոլիս դարձաւ ու նորէն ձեռք առաւ Բերայի քարոզչութիւնը։ Այդ միջոցին է որ Կրօն. Ժողովին անդամ եղած է երբ Վեհ. Հայրապետը ատենապետն էր նոյն ժողովին։ Պէշիկթաշի գերեզմանատան կառավարութեան յանձնուելու խնդրին առթիւ, Ներսէս վարդապետ վէճի բռնուելով հանգուցեալ Յովհաննէս Նուրեանի հետ, կը հրաժարի Բերայի քարոզչութենէն և նոյն տարին (1888) կընտրուի Տրապիզոնի առաջնորդական փոխանորդ։ Տարի մը ետք Աշքեան պատրիարք զինքը Պոլիս կը կանչէ, անոր յանձնելու համար պատր. փոխանորդութիւնը, շատ ազդեցիկ, կարող և ուղղամիտ գործունէութիւն մը ցոյց տուած է Ասլանեան պատրիարքարանին մէջ։

Այդ պահուն Զմիւռնիոյ առաջնորդ կընտրուի և ինը տարի անընդհատ կը վարէ այդ պաշտօնը ձեռնհասութեամբ ու ամէնուն սէրն ու յարգանքը վայելելով, միայն ատելով մէկ քանի զեղխ ջոջերէ, որոնց ընտանեկան մոլութիւններն և զեղծումները խիստ լեզուով քննադատելու համարձակութիւնը ունեցած էր։

1898 օգոստոսին Էջմիածին գնաց եպիսկոպոսանալու և տարի մը ետքը Վանայ մէջ ծագած դպրանափոխական շարժման առթիւ հոն ղրկուեցաւ։ Ասլանեան եպիսկոպոս շատ արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցաւ հոն. դպրանափոխ ըլլալու մտադրը-

րութիւն ունեցողները իրենց եկեղեցին դարձուց, նպաստի արդար ու ճիշտ բաշխումներ կատարելով՝ ժողովրդին անհուն ցաւերն սփոփեց, կուսակալին հետ խորհրդակցութեամբ և պալատ հեռագիրներ ուղղելով, քիւրտ պէյերու և բաշաներու վայրագութիւնները զսպեց և ոմանք ալ աքսորել տուաւ։

Իր գործն աւարտելով դարձաւ Պոլիս։ Մէկ քանի ամիս ետք ընտրուեցաւ առաջնորդ Ռոտոսթոյի, ուր կը մնայ երկուքուկէս տարիէ իվեր, մեծ մղում տալով մասնաւորապէս կրթական գործերու։

Ահաւասիկ հակիրճ ուրուագիծը այն եկեղեցականի կեանքին, որուն Պուլկարիոյ առաջնորդ ըլլալը ամէն տեսակէտով մաղթելի է, ու իր մեծ փորձառութիւնը, նկարագիրը, պարկեշտութիւնն ու լրջմտութիւնը զինքը արժանաւորագոյն կղերականը կը կացուցանեն այս տեսակ ծանր ու կնճռոտ պաշտօնի մը։

Իր կեանքին այս համառօտ գիծերը ուրուագծեցինք՝ զաղափար մը տալու համար ընդհանրապէս Պուլկարիոյ հայութեան, բայց մասնաւորապէս զինքը ճանչցնելու համար այն պատգամաւորներուն, որոնք մօտերս Սոֆիա պիտի երթան Պուլկարիոյ առաջնորդը ընտրելու։

Շարարշ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Էջմիածին, 25 Օգոստ.

Ձեր պատ. թերթի յարգոյ ընթերցողներին կարծեմ արդէն ծանօթ պէտք է լինի ռուսահայ եկեղեցապատկան կալուածների մասին, ռուս կառավարութեան այն նոր կարգադրութիւնը որը ստորագրեց Ցարը յունիսի 12ին։ Այս ծրագիրը կայսեր հաւատարիմ ծառայ լիրբ Գալիցինինն է, որ Կովկասի հայոց ծխական դպրոցների կայքերը գայլաբար յափշտակելուց չը բաւականանալով, պատրաստուում է իր այս վերջին հարուածով ամբողջովին ձուլել հայ տարրը ռուս ծիւրատ միապետութեան։ և այսպէսով իրանց պատմութեան մէջ մի տեղ բռնել, ինչպէս Բիսմարկը։ Մեր նախնիքների պատմական մեծ ծառայութեանց հաստուցումն է այս անամօթ յափշտակութիւնը, որ կատարվում է ռուս բիւրօկրատիայի ապերախտ ներկայացուցիչների ձեռքով։ Հայը, ինչպէս ուրիշ շատ անգամներ, ամեն վտանգ աչք առնելով իր անձնուէր հովիւների առաջնորդութեամբ յարձակուել է միշտ։ Եկեղեցւոյ անօրէն թշնամիների վրայ և դարեր շարունակ, իր արեան գնով, կարողացել է պահպանել իր միակ ապաւէնը— եկեղեցին կրակապաշտ պարսկի, մոլեռանդ Արաբի, Նենգաւոր Յոյնի և արիւնռուշտ Թուրք թափարների դէմ, բնական է որ այս անգամ էլ չէր կարող լուռ ու մունջ հանդիսատես լինել ու տանել ամէն տեսակ ոտնձգութիւն, ազգային ամեն տեսակ վիրաւորանք, որը արտայայտուում է այս վերջին յափշտակութեամբ։ և զգալով, որ իր հայրերի ձայնը բողոքում է այս օրինազանցութեան դէմ, ցնցուեց, ոտքի կանգնեց դիմադրութիւն ցոյց տալու և ի պահանջել հարկին նաեւ զէնքի դիմելու։ Այս առթիւ կազմուած օգոստոս 3ին Երեւանի ցոյցը մի նշան էր համոզելու, թէ հայը ունի տակաւին ազգային բարձր ինքնագիտակցութիւն։

Երեւանում այդ օրը կատարվում էր հոգեհանգիստ Մելքիսեդէկ Մուրատեանի մահուան պատճառաւ։ որտեղ ներկայ էր նաեւ առաջնորդը՝ Սուքիաս եպիսկոպոսը։ Եկեղեցւոյ արարողութիւնից յետոյ ժողովուրդը դիմում է սրբազանին և յայտնում, որ ցանկանում է նրա առաջնորդութեամբ էջմիածին գնալ, տանելով իր հետ նաեւ ամբողջ հայութեան արդար բողոքը Կաթողիկոսին։ Առաջնորդը իսկզբան հրաժարվում է պատճառաբանելով թէ ինքը արդէն մի անդամ եղել է էջմիածին։ Ժողովուրդը օդը թնդացնում է աղաղակելով անորից գնանք։ Սրբազանը նկատելով որ յամառելը կարող է ժողովրդի յուզումը աւելի եւս գրգռել, մօտենում է իրեն համար պատրաստած կառքին և ընդհանուր աղաղակների մէջ նստում կառքը։ Մի քանի մարդիկ մօտենալով ձիերին բռնում են սանձերը և սկսում են առաջ չալ ժել։ Նազարեան փողոցում, բազմութիւնը հասնում էր արդէն 3000 հոգու։ Այս փողոցից ամբոխը թեքվեց աղաղակներով դէպի այն փողոցը, որտեղ գտնուում է Նահանգապետի տունը։ "Բոլորս դէպի էջմիածին" աղաղակը դղրդացնում էր օդը։ Նահանգապետը ամառանոցից արդէն վերադարձած լինելով՝ գտնուում էր իր բնակարանում։ այնտեղ էր նաեւ ոստիկանապետը։ Երկուսն էլ աղաղակներից սթափելով դուրս թռան։ ոստիկանապետը փորձեց կտրել ժողովրդի հոսանքը։ մի քանի խօսք փոխանակեց կառքի մէջ նստած և ամբոխով շրջապատուած առաջնորդի հետ։ սակայն բազմութիւնը գրոհ տալով, ժամանակ չը տուեց որ խօսքը վերջացնի և մի փայտի հարուածով մի կողմ նետեց ոստիկանապետին։ Այսպէս յաղթական կերպով անցնելով Նահանգապետի տան առաջովը, Ռուսաց Նորակառոյց Եկեղեցւոյ կողքով հասաւ քաղաքի հրապարակը։ Այս տեղից ամբոխի հոսանքը ծռվեց դէպի Հրազդանի կամուրջը նոյն աղաղակներով և ցոյցերով, քշելով իր հետ միասին առաջնորդ Սրբազանի կառքը։ Ոստիկանապետը տեսնելով որ չէ կարելի համոզել ցուցարարներին իրանց մտադրութիւնից յետ կենալ, վերադարձաւ շտապով քաղաք, յայտնեց Նահանգապետին, որը անձամբ հեռագրատուն վազ տալով հրահանգներ տուեց էջմիածնի ոստիկանութեան։ իսկ ոստիկանապետը վերցրեց զինուորների մի խումբ, որպէսզի ամբոխի յետեւից հասնելով կարողանայ բռնի կերպով յետ դարձնել։ Էջմիածին ուղղուող ամբոխը արդէն կէս ճանապարհի վրայ գտնուած Փարաքար գիւղն էր հասել, երբ ոստիկանապետը հասաւ իր զինուորներով։ Այս տեղ մի անյաջող փորձ արեց կանգնեցնելու ցուցարարները։ սակայն դարձեալ անօգուտ, օդի մէջ քարեր թռան և զինուորներն քամակ դարձրին։ Փարաքարի գիւղացւոց մի մասն էլ միացաւ, ոտով քալող ահագին շխթային, որը ճանապարհին բոլոր հանդիպողներին իրան միացնելով, աւելի մեծացաւ։ Հոսանքը հետզհետէ մօտենում էր էջմիածնի սահմաններին, երբ ճանապարհը յանկարծ փակուած գտնուեց մի վաշտ զինուորներով։ Երեվանի զօրքը Վաղարշապատից եկած զօրքի հետ հասնում էր մօտ 300ի։ Արգելքը լուրջ էր, իսկ դիմադրողները քայլերը արագացրին և հասան վանդակների հետ միացած սարսափահար երեխաներին, որոնց գաղթական վիճակը փողոցի երգիչներ էր դարձրել օրական հացը ճարելու համար։ Հայկական խշտութիւնը այդ անմեղ արարածների կողմից անգիտակցաբար բաղար էր հանվում Թիֆլիզի բարեկեցիկ հայութիւնից մի քանի սև ու ժանգոտ կոպէկներ կորզելու համար։

Երեխաները հէնց որ տեսան իրենց ծանօթ կոյր պարոնին՝ ուրախութեան արտայայտութիւնով բաց թողին իրենց փրկիչ երկաթը և փաթաթվեցան երկու ընկերների ծնկներին։

— Ռ՞որ կերթաք, հարցրեց կոյրը, այստեղ ի՞նչ գործ ունիք, վահան։

Երեխան պատասխանել չը կարողացաւ, մի բոպէ վերջը խօսքերը կըտոր կտոր անելով պատասխանեց.

— Այս տեղէն հեռանանք, ամի, քիչ մնաց ջուրն ընկնէինք. կերթայինք երգելու, քաղաքին միւս կողմը քամին շատ ուժով էր։

Բոլոր խանութները տուներու մէջ փակված էին, դռներն ու պատուհանները գոցած. շատ բակեր մըտանք, շատ երգեցինք, շատ պարեցինք. բայց ոչ ոք չը լսեց. պատուհան մը չը բացվեցաւ որ մեզի քանի մը կոպէկ նետէին։ Այսօր մի կոպէկ անգամ առած չենք. մայրիկը տունը հիւանդ և անօթի պառկած է. մտածեցինք թէ այս կողմը քամին աւելի թեթև պիտի ըլլայ և մենք կը կարենանք քանի մը փարա առնել։ ժամէն աւելի է որ կամուրջին վրա ենք. առաջ չը կրցանք անցնել. փոտցանք. ուֆ, շատ ցուրտ է։

— Շուտեան, դու դրան դրկիր, ես էլ սրան. շուտ արա, սրանք էլ քայլել չեն կարող. ասեց կոյրը ընկերոջը և դրկեց փոքրիկ գաղթականին։

Շուտեանն էլ իր բեռը վերցրեց և նրանք արագութեամբ անցան կամուրջը և հասնելով Վարանցովի արձանի մօտ՝ երեխաներին իջեցրին։

— Պետրոս, այս էր կոյրի անունը, տրամվայով էլ անկարելի է տանել սրանց. ասեց Շուտեանը, կոյրդ վարձենք, մեզ հետ կը տանենք Այն տեղ կը տաքնան, թէ փորները կը կշտացնեն և վերջը մեզ հետ կրկին կը վերադառնան։ չէ՞ որ ձեր կողմերն են ապրում։

— Այո, ապրում են Թացմինա։ Բայց մենք շատ կուշտանանք. իսկ որովհետև իր առջև ոչ մի խոշոր դոտ չը կար։ Նա չարագուշակ ու կատաղի մռնչոցը խառնելով գիժ Քուռի գոռում գոչումի հետ առաջ էր մղվում ջրի բացած ազատ ճեղքվածքով ու փր հսկայական թափով կամուրջի վրայից անցնողներին փակցնում կամուրջի վանդակներին։ Նոյն վայրկեանին կամուրջի վանդակներին փակել էին և երկու դպրական հայ մանուկներ, ցնցոտիների մէջ, մի աղջիկ և մի տղայ։ Քամին շատ էր սեղմում նրանց վանդակներին. պաղ երկաթները կարծես մխվում էին նրանց մերկ մարմինների մէջ. երեխաներից փոքրիկի աչքերից արցունքը հոսում էր, բայց նա ժամանակ չունէր բարձրաձայն լալու. միայն աչխատում էր քրոջը և վանդակին լաւ փակչել որպէսզի քամին չը կարողանայ վանդակի վրայով թոցնել ու ջրի մէջ նետել։ Շուտեանը և իր ընկերը մօտեցան այդ երեխաներին. մի աչքով կոյր ընկերը նկատեց նրանց և զառնալով ասեց.

— Քայլերդ արագացրու Շուտեան, այդ երեխաները մեր փողոցում երգող և պարող երեխաներն են. քամին ուժաթափ է արել նրանց. կարող են վնասվել։

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(5)

ՆՈՒԻԷՐ Ս. Զ.—ԻՆ

ԳԼՈՒԽ Բ.

Կովկասեան սարերից կատաղած քամին կուրի հովտի միջով վշշալէն թշշալէնյարձակում էր գործում Տփխիսի վրա և փոշի ու աւազ լցնում փողոցների միջով անցնողների բերաններն ու աչքերը։

Փողոցների եզրներում ցցված հսկայական ուրեականների նման տերևաթափ ծառերը ճռճռալով ճկում էին իրենց հպարտ գագաթները և խոնարհ բարևներ տալիս կատաղած տարերքին։

Շարած, շտապող, կուրծքը քամբուն տալով մաքառող անցորդների գլխարկները թռչում էին գլուխներից և տէրերին ստիպում վազել իրենց ետևից չորս թաթերի վրա։ Այդ ի բաքանցումի պահուն Շուտեանը և իր ընկերը, որի մի աչքը չէր տեսնում, կոյր էր, անցնում էին Միքայէլեան կամուրջի վրայով, կուրի վրա։ Այդ տեղ փոթորիկը տիրապետում էր բոլորովին անսանձ կերպով,

Երկու ընկերները քայլերը արագացրին և հասան վանդակների հետ միացած սարսափահար երեխաներին, որոնց գաղթական վիճակը փողոցի երգիչներ էր դարձրել օրական հացը ճարելու համար։ Հայկական խշտութիւնը այդ անմեղ արարածների կողմից անգիտակցաբար բաղար էր հանվում Թիֆլիզի բարեկեցիկ հայութիւնից մի քանի սև ու ժանգոտ կոպէկներ կորզելու համար։

Երեխաները հէնց որ տեսան իրենց ծանօթ կոյր պարոնին՝ ուրախութեան արտայայտութիւնով բաց թողին իրենց փրկիչ երկաթը և փաթաթվեցան երկու ընկերների ծնկներին։

— Ռ՞որ կերթաք, հարցրեց կոյրը, այստեղ ի՞նչ գործ ունիք, վահան։

Երեխան պատասխանել չը կարողացաւ, մի բոպէ վերջը խօսքերը կըտոր կտոր անելով պատասխանեց.

— Այս տեղէն հեռանանք, ամի, քիչ մնաց ջուրն ընկնէինք. կերթայինք երգելու, քաղաքին միւս կողմը քամին շատ ուժով էր։

Բոլոր խանութները տուներու մէջ փակված էին, դռներն ու պատուհանները գոցած. շատ բակեր մըտանք, շատ երգեցինք, շատ պարեցինք. բայց ոչ ոք չը լսեց. պատուհան մը չը բացվեցաւ որ մեզի քանի մը կոպէկ նետէին։ Այսօր մի կոպէկ անգամ առած չենք. մայրիկը տունը հիւանդ և անօթի պառկած է. մտածեցինք թէ այս կողմը քամին աւելի թեթև պիտի ըլլայ և մենք կը կարենանք քանի մը փարա առնել։ ժամէն աւելի է որ կամուրջին վրա ենք. առաջ չը կրցանք անցնել. փոտցանք. ուֆ, շատ ցուրտ է։

— Շուտեան, դու դրան դրկիր, ես էլ սրան. շուտ արա, սրանք էլ քայլել չեն կարող. ասեց կոյրը ընկերոջը և դրկեց փոքրիկ գաղթականին։

Շուտեանն էլ իր բեռը վերցրեց և նրանք արագութեամբ անցան կամուրջը և հասնելով Վարանցովի արձանի մօտ՝ երեխաներին իջեցրին։

— Պետրոս, այս էր կոյրի անունը, տրամվայով էլ անկարելի է տանել սրանց. ասեց Շուտեանը, կոյրդ վարձենք, մեզ հետ կը տանենք Այն տեղ կը տաքնան, թէ փորները կը կշտացնեն և վերջը մեզ հետ կրկին կը վերադառնան։ չէ՞ որ ձեր կողմերն են ապրում։

— Այո, ապրում են Թացմինա։ Բայց մենք շատ կուշտանանք. իսկ

մադրութիւնը ուժեղ։ Այս տեղ մի փոքրիկ ընդհարումտեղի ունեցաւ ժողովրդի և զինուորների միջև. վերջապէս ցուցարարները յաղթող հանդիսացան և պատռելով զինուորների շղթան, մբոտան մեծ աղաղակներով և ցոյցերով Վաղարշապատ, դիմաւորուելով ժողովրդից ոգևորուած աղաղակներով։ Ընդհարման միջոցին երկու կողմանէ էլ մի քանիներ վիրաւորուեցին։ Վանքի շուրջը գտնուող զինուորք չը փորձեցին, կամ աւելի լաւ կը լինի ասել՝ չը համարձակեցան փորձել՝ արգիլել ժողովրդի մուտքը դէպի վանք և ամբոխը յաղթական կերպով ճեմարանի մուտքով լցուեց վանքի բակը։ Այս միջոցին ոստիկանապետը ուզեց վանքի բակը մտնել։ Աստուածաբան Կարապետ վարդապետ, յանդիմանելով իր այս արարքը, ասաւ թէ՝ կայսրեր նոյն իսկ չեն համարձակած ձիով վանք մտնել. փայտեր շարժուեցին և ոստիկանապետը դուրս փախաւ։ 10 հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն մտաւ վեհարան, իր հետ ունենալով առաջնորդը։ Վեհափառը բարեհաճեց հանդիսասրահից ժողովրդին ներկայանալ և իրեն յոտուկ ճարտասանութեամբ խաղաղացրեց հասարակութեան յուզուած մտքերը, խոստանալով պաշտպանել ազգի և եկեղեցւոյ շահերը։ Ժողովուրդը օդը թնդացրեց «կեցցէ՞ Հայրիկ, մերժիր ևն.» աղաղակներով։ Ժամի 7ի միջոցին ցուցարարները վերադարձան նոյն յաղթանակով. տպաւորութիւնը առհասարակ շատ ոգևորիչ էր. Ալէքսանդրապոլից և ուրիշ տեղերից ևս ցանկանում էին նոյնպիսի ցոյցերով Էջմիածին գալ իրենց կենդանի բողոքը ներկայացնել Վեհափառին, սակայն ոստիկանութիւնը լուրջ միջոցներ ձեռք առնելով՝ արգիլեց։ Դրա փոխարէն ժողովուրդը ուղարկեց պատգամաւորներ իրանց բողոքը յայտնելու։

Այս գէպքերից անմիջապէս յետոյ Էջմիածին կանչեցան նորին վեհափառութեան հրամանով բոլոր թեմերի առաջնորդները և նոցա յաւորդները. ընդհանուր ժողովը գումարելու համար։ Սինոթի անդամներից՝ Մխիթար վարդապետ և իր եղբայր Գալուստ միաբանը ամեն կերպ աշխատում էին համոզել իրանց ծանօթներին թէ առանց դիմադրութեան յանձնելը միակ միջոցն է. սորա կուսակից էին նմանապէս մի քանի եպիսկոպոսներ, սակայն երբ յեղափոխական կարմիրներից երկու հոգի ներկայանում են վերոյիշեալներին և յայտնում որ եթէ իրանց կարծիքների մէջ յամառին, անպայման տէռորի պիտի ենթարկուին, օձի նման անմիջապէս փոխեցին իրանց շապիկները։ Մխիթար վարդապետ և կամ իր եղբայրը գիտակցօրէն և կամ հսմոզմամբ չէ որ պաշտպանում են առանց ընդդիմանալու յանձնելու որոշումը, այլ մի տարբեր կարծիք յայտնելով ուզում են ցոյց տալ թէ իրենք աւելի հեռատես են և իրանց մտածածը բարձր է և լաւ։ Հայ ժողովուրդ, ինչպէս տեսնում ես, այսպիսի ճգնաժամին էլի յեղափոխական տարրն է, որ կարողացաւ իր ազդեցութեամբ շատ դաւաճանների սիրտը ահ ձգել և կարգի բերել, ուստի ջանայ ամէն կերպ թիկունք լինել յեղափոխութեան, որովհետև նա էլ մեր տան սիւներից մէկն է, որի կոտրելով կամ ոչնչանալով կարող է նաև տունը, այսինքն ազգը փուլ գալ։ Ընկերներիցս շատեր, որոնք յեղափոխութիւնը այս բոպէիս համար ոչինչ էին համարում, այն համոզման եկան, թէ նա մի ոյժ է և ամէն հայի պարտականութիւն է զանազան եղանակներով զօրացնել այդ ոյժը։

(Շարունակելի)

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՑ

«Շարժում»ի 540 թ.ին «Ներկայ հայ երիտասարդները» եւ 543ի «Ամօթալի համբերութիւն» կոչը թելադրեցին ինձ պահ մը խորհիլ հայկական այժմէութեան վրայ։ Առաջինին մէջ հայութեան ազատագրումին անզուսպ զինուորն է որ. չկրնալով զսպել իր սրտի մէջ փոթորկող եռանդը, կտրած իր յոյսը մեր սեփական յեղափոխական կուսակցութիւններէն, կերթայ իսպաս դնել իր բազուկները համաբախդ այլ ապստամբ ժողովուրդի մը սուրբ դատին. ու այդպէսով գոնէ իր վրէժը յագեցնել մեր դարաւոր արիւնկալ թշնամիէն։ Իսկ երկրորդին մէջ, մեր թշուառ հայրենիքի մէկ խոշոր հատուածին, արջային թաթի ներքեւէ հասնող խեղդուկ բողոքի հառաչն է որ կուգայ յուզել մեր սրտերը։

Արդարեւ ծայրայեղօրէն դժբախտ ենք մենք հայերս, վասնզի մեզ վիճակակից շատ ու շատ ազգեր կարելի է թէ անցեալ պատմութեանց մէջ եւ թէ ներկայիս տեսնել. սակայն մենք, անով աւելի դժբախտ ենք որ երբ ուրիշներ մէկ ինչնամիի դէմ կը մաքառին, մենք ստիպուած ենք 2-3 մէկզմէկէ աւելի անգութ, աւելի գազանաբարոյ ու մոլեռանդ գազաններու դէմ մնալ մէն միայնակ. բայց ի՞նչ արած որ, ուրիշ կերպ ալ կարելի չէ։ Պատմական անդարմանելի սխալ մը զոր մեր նախահայրերը գործեցին միամտաբար, խաբուելով ոուսական նենգ ու խարդախ խոստումներէն եւ որուն դառնութիւնն քանակը այսօր մենք կզգանք։ Օրմ, պետութիւն կոչուած գազիր գանգուածը իր արժանի վճիռը հաղած է արդէն։ Իսկ այդ Քրիստոսի անունով դիմակաւորուող արջը, երբ ողբացեալ Աչտարակեցիի օրով, գունագեղ խոստում ու հազար ու մէկ քծինքներով, հայ ազգը գործիք դարձուցած, Պարսկաստանէն խոշոր մասմը կուլ տուաւ, որ մեր հայրենիքին ամենէն պաշտելի յիշատակները կը պարունակէր իր մէջ, Աւլեւոր Մասիսը, Շիրակ ու Այրարատ յուռթի գաւառները. Ս. Էջմիածինով մէկ տեղ։ Ո՞վ կրնար երեւակայել թէ մեր հայրենիքի մէջ տեղաւորուելով, այդ արեւելեան քրիստոնեաներու մենաշնորհեալ պաշտպանը՞. օրին մէկը տուած բոլոր ազնիւ խոստումները ոտնատակ տալէն զատ, նոյնիսկ պիտի բռնադատէր զմեզ ընդունիլ. Ս. Էջմիածնայ աթոռին վերայ ռուս «վլատիքա»ի մը բազմիլը ու մեր անոր հպատակիլը. պարզ խօսքով հրաժեշտ բոլոր ազգային ձգտումներու։

Վերջապէս Տօն գետի եզերքները բնակող երբեմի այդ վայրենին այսօր ինքզինքը զօրաւոր կզգայ այլեւս ու յայտնի համարձակ եւ անբարտաւանօրէն կերկնցնէ իր արջային մագիլները մեր ամենէն նուիրական զգացումները ջարդ ու փշուր ընելու։ Ի՞նչ ընել. վախնալով անոր հզօր հարուածներէն, ստրկանա՞լ անոր առջեւ եւ համակերպի՞լ անոր տմարդի ու գազանային քմայքներուն, բայց անիկայ մեր հայրենիքի ամենէն կարեւոր մէկ մասին հետ մէկ տեղ մէկուկէս միլիոնի չափ ժողովուրդիս է որ կուլ տալ կուզէ։ Տանիլ ատոր, կը նշանակէ՞ մարդկային բոլոր արժանապատուութիւններէ զուրկ ըլլալ եւ երբ անհատ մը կամ ազգ մը արժանապատուութեան զգա-

---

սրանք յայտնում են որ իրենց հիւանդ մայրը ուտելիք է սպասում։ Ես սրանց տունը գիտեմ. մի անգամ հանդիպել եմ. աւելի լաւ չի լինի՞ ուտելիք առնենք եւ շուտով՝ ձեր մայրիկին տանէք։

—Ինչպէս կուզէք ըրէք, ամի։

Զարուհու այդ կարճ եւ համակերպական նախադասութիւնը հազիւ էր վերջացել, երբ Պետրոսի ուսին մէկը խփեց, ասելով.

—Այս ինչ ես խօսում այստեղ, այս մուրացիկների հետ, Պետրոս։

Պետրոսը երեսը դարձրեց եւ իր առջեւը գտաւ բարձրահասակ, սիրուն, ոսքից գլուխ նոր ու փայլուն զգեստների մէջ պատսպարված փաստաբան Քարոտեանին, որի շրթունքների վրա խաղում էր կեղծ համեստութեան, խոնարհութեան ժպիտը։

—Օհ, դուք էք, պարոն Քարոտեան, նեղողութիւն, սրանք մուրացիկներ չեն, այլ հայ գաղթական որբեր։ Լաւ պատահեցիք, մի քանի ռուբլի էլ դուք տուէք։ Սրանք մի հիւանդ մայր ունեն եւ օգնութեան մեծ պէտք։ Տեսէք, այս սարսափելի օրին դուրս են եկել իրենց թշուառութեամբ մարդկանց զարմացնելով մի քանի կոպէկ ձեռք բերելու իրենց հիւանդ մօր համար հաց գնելու։

—Էհ, Պետրոս, դեռ այդ տեսակ բաներից ձեռք չես քաշել։ Այն էլ մի քանի ռուբլի ես ուզում, կարծես մի քանի կոպէկը բաւական չէ. ու ձեռքը տարաւ գրպանը։

—Ոչ, պարոն Քարոտեան, մի քանի կոպէկով գործը չի վերջանայ. եթէ պահանջը այդչափ քիչ լինէր, ես էլ կարող էի բաւարարութիւն տալ։ Մի քանի ռուբլի պէտք է տալ։

—Ուֆ, ձեզ հանդիպելն անգամ վտանգաւոր է. անպատճառ տուգանքի կը ենթարկվի մարդ. եւ անտեղի տուգանքի։ Կէս կատակով պատասխանեց Քարոտեանը ու հանեց մի երեք ռուբլիանոց թղթադրամ եւ Պետրոսի ձեռքի մէջ դնելով կրկին կեղծ ժպիտը շրթունքներին. եւ մեծ գոհողութիւն անողի հովերը առնելով աւելացրեց-կարծեմ հիմայ գոհ կը մնաս. դէ մնաս բարով։

Քարոտեանը հազիւ երկու քայլ հեռացել էր, երբ Շեւոտեանը եկաւ բեռնաւորված ու մի քիչ խոժոռած դէմքով հարցրեց.

—Պետրոս, ի՞նչ էիր խօսում այդ չարլատանի հետ։

—Ոչինչ. այս երեխաների համար երեք ռուբլի փող պոկեցի։

—Օֆ, իզուր, զարմանում եմ քեզ վրա. ի՞նչ պէտք կար այդ չարլատանի հետ խօսելու մի քանի ռուբլի առնելու համար։

—Էհ, Շեւոտ, կարծես չարլատանի փողով այս անօթի երեխաներին կերակրել չի կարելի։ Շնից մի մաղ պոկելն էլ չահաւոր է։ Կարծես միս աւողները բոլորն էլ ազնուութեան պատենդ ունեն։ Կարեւորը այն է որ սրանց շտապով օգնութիւն պէտք է հասցնել եւ հիմա ես ու դու այդ հնարաւորութիւնը չունենք. երանի թէ Քարոտեանի պէս մի չարլատան էլ պատահի եւ նրանից էլ վերցնեմ. ես սիրում եմ դրանց պատժել. արդէն ինքն էլ իմ ուզածը տուգանք անուանեց։ Շատ մանր մունր բաների ետեւից ես ընկնում. այս պարագաներում դրական մարդ պէտք է լինել։

(Շարունակելի)

ցում չունի նա մարդ կամ ազգ ըլ-
լալէ դարձած է, գնչուի հետ համե-
մատել միայն կարելի է զայն։

Իրաց այս վիճակին մէջ ի՞նչ ընել,
միայն ո՞ղբ կարդալ, 500 երկար տա-
րիներ ողբ կարդալով միշտ թշուառ
եղանք ու միշտ արհամարհանքի ար-
ժանացանք։ Այս դարերու մէջ թշ-
ուառութիւնը չէ՞ որ կարեկցութիւն
կը շարժէ, սորվինք ժամանակի պա-
հանջին յարմարիլ, բազմաթիւ օրի-
նակներ ունինք աչքերնուս առջեւ։

Ցաւակցութիւն չունիմ ազգին
ուղեցոյցի հովեր առնել, բայց իբր
ազգին մէկ անհատը իրաւունք ունիմ
իմ խոնարհ կարծիքս յայտնել։ Ա-
այժմ մեր հիւսիսային արջի դէմ ա-
մէն ցոյց ապարդիւն անցնելուն, օրո-
րոցի մանուկն իսկ շատ լաւ կզգայ,
միայն թէ ըստ իս աւելի լաւ կը լի-
նի Տաճկահայաստանի մեր կռիւը ա-
ւելի զօրեղացնել։

Հայ հարո՛ւստ, քու ժանգոտ ոս-
կիներդ ո՞ր օրուան պահած ես, եւ
դու, հայ երիտասարդ, քու զօրեղ բա-
զուկներդ ո՞ր առթի կսպասեն։ Ի՞նչ,
երբ ռուսահայութիւնը ռուսանայ եւ
Տաճկաստանը բոլորովին ամայանայ,
ա՞յն ատեն պիտի գործենք։ 4 ուկէս
միլիոնէ բաղկացեալ ազգ մը ենք.
մէկ-մէկ կամ երկու-երկու դահեկան
տալով (որն որ ոչնչութեան հասնող
աննշան թիւ մըն է) չը պիտի՞ կրնանք
մակեդոնացիներուն պէս լաւ զինուած ապստամբական խումբեր ի-
ջեցնել մեր հայրենիքը, որով միայն
պիտի կրնանք դարման տանիլ մեր
վիշտերուն։

Ալիսի Ոդեգիր

Հաճեցէք տեղ մը շնորհել ձեր մօտակայ թիւերէն միոյն մէջ հետեւեալ շնորհակալիքին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Արժ. Տ. Սարգիս Քհ. Ղարիպեան պսակադրութեան մը առթիւ Պալչըգ գացած ըլլալով հաճած է ի նպաստ քաղաքիս Աղքտ. ընկերութեան հանգանակութիւն մը կատարել հետեւեալ բարեսէր ազգայիններէն.

Պ. Կարապետ Տ. Մկր. Փր. Սնդտիչեան	2.—
Պ. Գրիգոր Կարապետեան	2.—
Պ. Յարութիւն Ցովակիմեան	1.—
Պ. Մարտիրոս Սամուէլեան	1.—
Պ. Սարգիս Մաթոյեան	1.—
Պ. Յարութիւն Բէքմէզճեան	—.50
Պ. Հրանտ Ճիլաճեան. Ա. Պոյաճեանի ամուսնութեան առթիւ փոխան հարսանուէրի	3.—
Գումար	10.50

Այս առթիւ Աղքտ. ընկերութիւնս ի դիմաց կարօտեալներու կը փութայ իր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել, թէ Արժ. տէր հօր բարեսէր ջանքերուն և նուիրատու Աղգայնոց, ինչպէս նաև այն կարգ մը անձնաւորութեանց համար, որոնք խոստացած են իրենց նուէրովը մխիթարել չքաւորները և քաջալերել Աղքտ. ընկերութիւնը։

Ի Դիմաց Աղքտ. Ընկերութեան

Վ. Ատենապետի Ատենադպիր
Պ. Քիւրճեան Յ. Ազաբեան
(ԿՆԻՔ)

8 Սեպտեմբեր 1903
Վառնա

ՍՕՖԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

Սոֆիայէն կը գրեն մեզ թէ պատգամաւորական ընտրութիւնը տեղի ունեցեր է կիրակի օր և պատգամաւոր ընտրուեր է Տիար Տօքթ. Սիմոն Քիւշիւ եան։ «Շարժումի առաջարկած թեկնածուն, որ կը յուսանք թէ յառաջիկայ առաջնորդական ընտրութեան բարուք ելքին վրայ իր նպաստաւոր ազդեցութիւնը կունենայ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՆ

Ե. Հ. Ուս. միութեան ժամանակին ժողովրդական հրատարակութիւնները։

1. «Ազատութեան երգեր», մի փոքրիկ հաւաքածոյ Գամառ. Քաթիպայի երգերէն, բանաստեղծի պատկերով։

2. «Ապստամբ Սասուն», մի կենդանի պատկեր Սասնոյ 1894ի դէպքերէն։

3. «Հայրենասէրի տաղերը», Միք. Նալբանդեանի ընտիր ոտանաւորներ, հեղինակի պատկերով։

4. «Հայուհիներուն», թարգմանուած 3 պատկերներ։

5. «Հերոսը», էջ մը յոյն ապստամբական կեանքէն։

Իւրաքանչիւր գրքոյկի գինն է միայն 20 սանթ. ճանապարհածախսը գնողի վրայ, Թուրքիոյ համար ձրի։ դիմել՝ «Բաբկէն—Սիւնի» ընթերցարան, Վառնա։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վաղվնէ սկսեալ անցեալ կիրակի օրը ընտրուած մասնախումբը պիտի սկսի Վեհափառ Կաթողիկոսին ողջունելիք հանրագրութիւնը պատցնել՝ ստորագրելու տալու համար։

— Պապայանի դերասանական խումբը յանձն առաւ ձրի ներկայացում մը տալ ի նպաստ Թուրքիայէն Պուլկարիա ապաստանած պուլկար գաղթական ներուն։ Պ. Թերթիս խմբագիրը՝ Պ. Վարդօ, խումբ մը հայ երիտասարդներու կողմէ ներկայացաւ Վառնայի քաղաքապետ Պ. Պերելինկովի խնդրեց որ այդ ներկայացումը իր հովանաւորութեան տակ առնէ։ Պ. Պերելինկով մեծ ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկը՝ իր շնորհակալութիւնը յայտնելով Վառնայի հայերուն։

— Վառնայի ուսուցչական խումբը արդէն կազմուած է. պուլկարերէնի համար պուլկար վարժուհի մը հրաւիրուած է համեստ ռոճիկով մը։ Ուսուցիչ մը կը պակսի. արդէն բանակցութեան մէջ են Եւրոպա գտնուող երիտասարդի մը հետ, այդ պակասը լրացնելու համար։ Մեծ յոյս կայ որ այդ երիտասարդն ալ համաձայնի գալ։

— Պատրիարքական փոխանորդ արժ. Տ. Վ. Վահան Տ. Յակոբեան Վառնա վերադարձած է պատգամաւորական ընտրութիւնը գլուխ բերելու համար։ Հայր Սուրբին յաջողութիւն կը մաղթենք Վառնայի էնտրիգանները յաղթելու համար։

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ ռուս կառավարութիւնը արդէն սկսած է զօրով գրաւել հայ եկեղեցական կալուածները առանց Կաթողիկոսի համաձայնութիւնը ստանալու։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեք զօրաբաժիններու պահեստի զինուորներուն զէնքի կոչելը պատերազմական տրամադրութիւնը սաստկացուցած է։

— Պուլկարական Կարմիր Խաչի ընկերութիւնը 100,000 ֆրանք նուիրեր է Մակեդոնացի վիրաւորեալներուն համար։

— Պատերազմական նախարարը Ռուսիայի, Ֆրանսայի, Աւստրիայի և Իտալիայի մէջ իրենց զինուորական կրթութիւնը շարունակող սպաները ետ կանչած է։

— Ռուս և աւստրիական դեսպանները պուլկար կառավարութեան յայտարարած են որ, եթէ Պուլկարիա անկարող կըլլայ իր սահմանները լաւ պահել, հը րոսախումբերուն անցնիլը արգիլելու համար, այն ատեն իրենք Թուրքիոյ պիտի յանձնարարեն որ խիստ միջոցներ ձեռք առնէ, որովհետև ան իրաւունքուն իր երկիրը պաշտպանել դրսէն եկող ապստամբներուն դէմ և խաղաղութիւնը վերահաստատել երկրին մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Զինովիէֆ Սուլթանի հետ ունեցած վերջին տեսակցութեան միջոցին պնդած է ապստամբութիւնը ճնշած միջոցին խուսափին Լօզէնկրատի և Գրուչէվայի կոտորածներու նման կոտորածներ յառաջ բերելէ։ Սուլթանը պատասխանած է որ արդէն քանի մը անգամ հրամաններ տրուած են այդ մտքով, աւելցնելով որ շատ տեղեր այլեւս մաքրուած են հրոսախումբերէ, գիւղացիներուն մեծ մասը իրենց տեղերը վերադարձած են և իրենց հպատակութիւնը յայտարարած թուրք իշխանութեան։

— Բ. դուռը տեղեկութիւն է առած որ չորս հազարի չափ պուլկարներ կը պատրաստուին խուժել Թուրքիա՝ Քրիստէնտիլի սահմանէն։

— Պուլկարիոյ գործակատար Պ. Կեչոֆի վերջին եռանդուն դիմումներուն շնորհիւ Պուլկարահպատակ պուլկարներու դէմ եղած հալածանքը՝ Պոլսոյ մէջ՝ մեղմացած է։

Այժմ միայն Պուլկարահպատակ թուրք մը. Շումլացի, լանտին մէջ կը գտնուի, որուն արձակման համար նոյնպէս եռանդուն դիմումներ կըլլան։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթինայէ կը հաղորդեն որ շատ մը պուլկար սպստամբներ Թեսալիա ապաստանած են։ Կառավարութիւնը միջոցներ ձեռք առած է սահմանները պաշտպանելու համար։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական մամուլը սկսած է չերմօրէն պաշտպանել մակեդոնական դատը և կառավարութենէն միջամտութիւն պահանջել է։

—Նախարարութիւնը իր հրաժարականը տուեր է։

ՏՕՔԹՕՐ Ն. Կ. ԹԱԳԻՈՐԵԱՆ

Նախկին երկարամեայ փորձառու բժիշկ Ս. Փրկչի (ի Կ. Պոլիս) Վիէննայի և պուլկար կառավարութեան հիւանդանոցներու։

Մասնագէտ ներքին հիւանդութեանց, կնախտաբոյժ և մանկաբարձ։

Սոֆիայի յարգոյ հայ հասարակութեան կազդարարուի թէ՝ վերոյիշեալ բժիշկը այս անգամ իր բնակարանը փոխադրած է Թրկովաքա փողոց և Բասաժ Սվ. Նիքոլայի ճիշտ անկիւնի տունը, օթէլ Բոտօբի դիմացը Սոֆիայի բաղնիքներու կարգը, օթեակ Մաքէտոնիայի քովի գեղարանէն ոչ հեռու։ Հիւանդ կընդունի ամէն օր ժամը 9-12 և 2-6։ 2 -2

ՄԱՅԻ ՆԵՐԿ
ՀՐԱՇԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ
Դիմէ՝ Պ. Ա. Զարպհանեկեանի
Վառնա Պուլկարիա)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатнича „Взаимность“ Варна